ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

29 հոկտեմբերի 2026թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Անդամներ՝ Տիգրան Ղազարյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով 15.10.2026թ.-ին հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 26.10.2026թ-ին ժամը 10:30-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 27.10.2026թ.-ին ժամը 10:30-ին:

2. Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին

2.1 Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակից՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի հայտում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում, բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, ուստի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և վերոհիշյալ մասնակցին տալ շտկման հնարավորություն: Հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Վերոնշյալ մասնակիցը՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ն, սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

2.2 Հանձնաժողովը որոշեց՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

3.1. Հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացրած հայտը և վերջնական գնային առաջարկը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ին, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

4.1.Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

4.2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

4.3. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Վարդանյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Հ.Հովհաննիսյան**

_____ **Տ. Ղազարյան**